

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հոկտեմբերի 2013 թվականի N 897-Ս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԻՎԱՆՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ» N 5222-ԱՍ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳՆ ՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի «Օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» N 765 որոշմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 2013 թվականի մայիսի 17-ին ստորագրված «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր» N 5222-ԱՍ ֆինանսական համաձայնագրին համապատասխան՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև ստորագրված «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր» N 5222-ԱՍ վարկային ծրագրի կառավարման խորհուրդ:

2. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև ստորագրված «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր» N 5222-ԱՍ վարկային ծրագրի կառավարման խորհրդի աշխատակարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) կառավարման խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության և միջազգային զարգացման ընկերակցության միջև ստորագրված «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր» N 5222-ԱՍ վարկային ծրագիրը կառավարող (բացառությամբ «Հայաստանում քաղցկեղի բուժման ծառայությունների արդիականացում» բաղադրիչի) անհատական կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) կառավարման խորհրդի՝ «Հայաստանում քաղցկեղի բուժման ծառայությունների արդիականացում» բաղադրիչը կառավարող անհատական կազմը՝ համաձայն N 3 հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. Սարգսյան

2013 թ. հոկտեմբերի 7
Երևան

Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2013 թ.
հոկտեմբերի 7-ի N 897-Ս
 որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԻՎԱՆՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ» N 5222-ԱՍ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև ստորագրված «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր» N 5222-ԱՍ վարկային ծրագրի կառավարման խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) հասարակական հիմունքներով աշխատող մարմին է:

2. Խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և սույն աշխատակարգով:

3. Խորհրդի և իրականացվող «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր» N 5222-ԱՍ վարկային ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) մասնակիցների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն աշխատակարգով:

4. Խորհրդի լրիվ անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև ստորագրված «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր» N 5222-ԱՍ վարկային ծրագրի կառավարման խորհուրդ:

5. Խորհուրդն ունի 2 անհատական կազմ՝ խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև ստորագրված «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր» N 5222-ԱՍ վարկային ծրագիրը կառավարող (բացառությամբ «Հայաստանում քաղցկեղի բուժման ծառայությունների արդիականացում» բաղադրիչի) անհատական կազմը և խորհրդի՝ «Հայաստանում քաղցկեղի բուժման ծառայությունների արդիականացում» բաղադրիչը կառավարող անհատական կազմը:

6. Խորհրդի նախագահը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարն է:

7. Խորհրդի քարտուղարության լիազորություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը:

II. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Խորհրդի գործունեության հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև կնքված «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր» N 5222-ԱՄ վարկային ծրագրի իրականացման կառավարումն է:

9. Խորհուրդը հանդես չի գալիս որպես ծրագրի իրականացնող կազմակերպության կառավարման մարմին:

10. Խորհրդի խնդիրներն են՝

1) ծրագրի իրականացման ընթացքում 100.0 հազ. ԱՄՆ-ի դոլար գումարից ավելի փոփոխությունների կատարման անհրաժեշտության դեպքում առաջարկվող փոփոխությունները՝ համապատասխան հիմնավորումներով հաստատելը, որոնք Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից պետք է ներկայացվեն Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ նախապես համաձայնեցվելով վարկատուի հետ.

2) ծրագրի նախապատրաստման փուլում կանխավճարի կամ դրամաշնորհի առկայության դեպքում այդ միջոցների ծախսման նկատմամբ վերահսկողությունը.

3) վարկային համաձայնագրի ստորագրումից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացումից (հաստատումից) հետո ծրագրերի շրջանակներում իրականացվող աշխատանքների տարեկան ժամանակացույցի, բյուջեների, դրանց ֆինանսական բացվածքների, մասնավորապես, վարկային միջոցների ծախսման ուղղությունների քննարկումը, մինչև հիմնարկի լիազոր մարմնի հաստատմանը ներկայացնելը.

4) ծրագրով նախատեսված և խորհրդի կողմից հաստատված ծրագրերի շրջանակներում աշխատանքների իրականացման ժամանակացույցին ու ծրագրերի բյուջեներին համապատասխան՝ խորհրդի՝ սահմանված կարգով և ձևով հաշվետվությունների հաստատումը.

5) ծրագրի՝ հաստատված աշխատանքների տարեկան ժամանակացույցի և բյուջեի հիման վրա ապրանքների, սարքավորումների, խորհրդատվական ծառայությունների, նախագծային, շինարարական ու վերահսկման աշխատանքների ձեռքբերման նպատակով անցկացվող մրցույթների վերջնական արդյունքների հաստատումը՝ 50,0 հազ. ԱՄՆ-ի դոլար գումարը գերազանցող պայմանագրերի դեպքում.

6) ծրագրի շրջանակներում տնտեսված միջոցների օգտագործման և (կամ) վերաբաշխման վերաբերյալ առաջարկությունները Հայաստանի Հանրապետության

կառավարություն ներկայացնելը՝ նախապես համաձայնեցնելով վարկ տրամադրած կազմակերպության հետ.

7) ԾԻԳ-ի կողմից ներկայացվող հաշվետվություններում հայտնաբերված խախտումների և թերությունների վերացման ուղղությամբ համապատասխան միջոցների ձեռնարկման մասին որոշումների ընդունումը և դրանց կատարման նկատմամբ հսկողությունը.

8) ծրագրի՝ հաստատված տարեկան աշխատանքային ժամանակացույցից ու բյուջեից առկա շեղումների վերացման մասին որոշումների ընդունումը և դրանց կատարման նկատմամբ հսկողությունը.

9) միջազգային վարկատու կազմակերպության մասնագետների այցի ժամանակ արտահերթ նիստ հրավիրելը ծրագրերի իրականացման արդյունքները պատվիրակության հետ քննարկելն ու արդյունքների մասին Հայաստանի Հանրապետության կառավարություն զեկուցագիր ներկայացնելը.

11. ԾԻԳ-ի տնօրենը ծրագրի իրականացման ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, վարկային համաձայնագրի դրույթներով, ինչպես նաև հիմնադրի, լիազոր մարմնի և կառավարման խորհրդի որոշումներով:

III. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

12. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն 3 ամիսը մեկ անգամ՝ ծրագրի իրականացման ընթացքի և հաստատված աշխատանքային ժամանակացույցով նախատեսված միջոցառումների իրականացման մասին ԾԻԳ-ի տնօրենի զեկույցը լսելու և քննարկելու նպատակով, ինչպես նաև էլեկտրոնային քվեարկության եղանակով՝ սույն աշխատակարգով սահմանված կարգով: Խորհրդի նիստերն արձանագրվում են:

13. Խորհրդի նախագահի, խորհրդի անդամների առնվազն 1/3-ի կամ ԾԻԳ-ի առաջարկությամբ խորհուրդը կարող է գումարել արտահերթ նիստ:

14. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին:

15. Խորհրդի նիստը վարում է խորհրդի նախագահը, իսկ նախագահի բացակայության դեպքում, նրա հանձնարարությամբ, խորհրդի անդամներից մեկը: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

16. Խորհրդի նիստի օրակարգը կազմվում և համապատասխան փաստաթղթերով տրամադրվում է խորհրդի անդամներին՝ խորհրդի նիստի անցկացումից 5 օր առաջ:

17. Հարցի քննարկման ընթացքում լրացուցիչ նյութեր կամ տեղեկատվություն պահանջվելու դեպքում հարցի քննարկումը տեղափոխվում է խորհրդի հաջորդ նիստ կամ իրականացվում է էլեկտրոնային քվեարկության միջոցով: ԾԻԳ-ի տնօրենը,

որպես խորհրդի քարտուղար, պարտավոր է ապահովել պահանջվող նյութերի տրամադրումը:

18. Խորհրդի նիստերն անցկացվում են խորհրդի նախագահի մոտ, եթե խորհրդի նախագահը նիստի անցկացման տեղի մասին այլ որոշում չի ընդունում:

19. Յուրաքանչյուր նիստ սկսվում է նիստի օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին զեկուցմամբ:

20. Խորհրդի նիստի արձանագրության մեկ օրինակն ստորագրվում է խորհրդի տվյալ նիստին ներկա բոլոր անդամների կողմից: Արձանագրության մնացած օրինակներն ստորագրվում են խորհրդի նախագահի և քարտուղարի կողմից:

21. Խորհրդի նիստերի արձանագրություններից քաղվածքներն ստորագրվում են խորհրդի նախագահի և քարտուղարի կողմից:

22. Խորհրդի նիստերին խորհրդատվական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հրավիրված անձինք:

23. Խորհրդի հաստատմանն են ներկայացվում ԾԻԳ-ի կողմից կազմված մրցույթի հայտահրավերը, ներկայացված մրցութային առաջարկների մասին ամփոփ տեղեկանքը, անվավեր ճանաչված առաջարկների հիմնավորումները, մրցութային հանձնաժողովի՝ հաղթող ճանաչելու մասին որոշումը, նախատեսվող գնի հիմնավորումը (շինարարության նախահաշիվը, ապրանքների տվյալ օրվա մոտավոր միջին գները և այլն), նախատեսվող գնից բարձր գնառաջարկի հիմնավորումը:

24. Խորհրդի որոշմամբ առանձնահատուկ դեպքերում (ելնելով գնման առարկայի բարդությունից, կարևորությունից և (կամ) աննախադեպ լինելու հանգամանքից) մրցութային առաջարկների փաթեթները կարող են բացվել հատուկ հրավիրված խորհրդի նիստում՝ պահպանելով մրցույթի անցկացման համար սահմանված բոլոր կանոնները:

25. Անհրաժեշտության դեպքում խորհրդի նիստերին կարող են հրավիրվել օրակարգի հարցերին առնչվող համապատասխան կազմակերպության ներկայացուցիչները:

26. Էլեկտրոնային քվեարկություն է կազմակերպվում ծրագրի իրականացման ընթացքում ծագած հրատապ հարցերի և խնդիրների լուծման համար՝ խորհրդի նախագահի, խորհրդի անդամների առնվազն 1/3-ի կամ ԾԻԳ-ի տնօրենի նախաձեռնությամբ:

27. Էլեկտրոնային քվեարկության վերաբերյալ ծանուցումը խորհրդի անդամներին ուղարկվում է խորհրդի քարտուղարության կողմից: Ծանուցման հետ մեկտեղ քարտուղարությունը խորհրդի անդամներին տրամադրում է ամբողջական տեղեկատվություն քննարկման առարկա հանդիսացող հարցի վերաբերյալ՝ ներառյալ տեղեկատվություն այն բաղադրիչի վերաբերյալ, որի շրջանակներում իրականացվելու է միջոցառումը և քվեարկության արդյունքում կազմված արձանագրության նախագիծը:

28. Տեղեկատվությունը քարտուղարության կողմից ուղարկվում է խորհրդի յուրաքանչյուր անդամի էլեկտրոնային փոստին, որը պաշտոնապես տրամադրվում է քարտուղարությանը խորհրդի կողմից ծրագրի կառավարման աշխատանքները

սկսելուց առաջ: Խորհրդի յուրաքանչյուր անդամ իր էլեկտրոնային փոստի փոփոխության մասին հայտնում է քարտուղարությանը:

29. Խորհրդի անդամը պատասխան էլեկտրոնային նամակով հաստատում է էլեկտրոնային քվեարկության ծանուցումն ստանալու փաստը:

30. Էլեկտրոնային քվեարկության ծանուցումն ստանալու փաստը հաստատող էլեկտրոնային նամակն ստանալու պահից առավելագույնը 10 օրվա ընթացքում խորհրդի անդամն իրականացնում է էլեկտրոնային քվեարկություն՝ քարտուղարությանը տեղեկացնելով իր ընդունած որոշման մասին:

31. Սույն որոշման 30-րդ կետում նշված պահից սկսած 10 օրվա ընթացքում քատուղարությանը պատասխան չներկայացվելու դեպքում խորհրդի անդամի դիրքորոշումը քննարկվող հարցի շուրջ համարվում է դրական:

32. Էլեկտրոնային քվեարկության արդյունքում որոշումները համարվում են ընդունված՝ եթե էլեկտրոնային քվեարկությանը մասնակցել է խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

33. Էլեկտրոնային քվեարկության արդյունքում արձանագրության թղթային եղանակը սահմանված կարգով ներկայացվում է խորհրդի անդամների ստորագրությանը:

34. Խորհրդի նախագահի և (կամ) անդամներից որևէ մեկի պահանջով հարցը կարող է հանվել էլեկտրոնային քվեարկությունից և ներկայացվել կառավարման խորհրդի հերթական նիստի օրակարգում:

IV. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ

35. Խորհրդի նախագահը՝

1) պատասխանատու է խորհրդի աշխատանքների արդյունավետ իրականացումը կազմակերպելու համար.

2) ներկայացնում է խորհուրդը Հայաստանի Հանրապետության կառավարությունում և այլ կազմակերպություններում:

V. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

36. Խորհրդի անհատական կազմերը հաստատվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

37. Խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև ստորագրված «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր» N 5222-ԱՄ վարկային ծրագիրը կառավարող (բացառությամբ «Հայաստանում քաղցկեղի բուժման ծառայությունների արդիականացում» բաղադրիչը) անհատական կազմում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարը (խորհրդի նախագահ), Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի առաջին տեղակալը, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալը, Հայաստանի

Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալը, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի տեղակալը, ինչպես նաև ներկայացուցիչներ Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, առողջապահության նախարարության աշխատակազմերից և ԾԻԳ-ի տնօրենը (խորհրդի քարտուղար):

38. Խորհրդի՝ «Հայաստանում քաղցկեղի բուժման ծառայությունների արդիականացում» բաղադրիչը կառավարող անհատական կազմում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարը (խորհրդի նախագահ), Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի առաջին տեղակալը, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալը, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի» տնօրենը, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի գործադիր տնօրենը, ներկայացուցիչ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամից, ինչպես նաև ներկայացուցիչներ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմից և ԾԻԳ-ի տնօրենը (խորհրդի քարտուղար):

39. Եթե խորհրդի անդամը համաձայն չէ խորհրդի ընդունած որոշմանը, ապա ներկայացնում է իր գրավոր հատուկ կարծիքը, որը կցվում է խորհրդի որոշմանը և գրառվում խորհրդի նիստի արձանագրության մեջ: Խորհրդի անդամը խորհրդի նիստի որոշմանն իր անհամաձայնության մասին զեկուցագիր է ներկայացնում իր վերադասին:

40. Խորհրդի անդամների թեկնածություններն առաջարկում է համապատասխան նախարարը:

41. Խորհրդի անդամը հիմնական աշխատանքից ազատվելու պահից դադարում է հանդիսանալ խորհրդի անդամ:

42. Խորհրդի անդամի պարտականությունները կարող են դադարեցվել համապատասխան նախարարի առաջարկությամբ՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

IV. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒԴԱՐԸ

43. Խորհրդի քարտուղարը՝

1) արձանագրում է խորհրդի նիստի քննարկումները և դրանց հիման վրա կազմում որոշման նախագիծ.

2) նախապատրաստում է նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերը և կազմակերպում դրանց տրամադրումը խորհրդի անդամներին.

3) հետևում է խորհրդի որոշումների կատարմանը և խորհրդի նիստում զեկուցում դրանց կատարման ընթացքի մասին.

- 4) վարում է խորհրդի աշխատանքների հետ կապված գործավարությունը.
- 5) գրանցում է խորհրդի անդամների ներկայացրած գրավոր հատուկ կարծիքները.
- 6) կազմակերպում է խորհրդի որոշումների համարակալումը և դրանց պատճենները տրամադրում խորհրդի անդամներին.
- 7) խորհրդի որոշումները և նիստի արձանագրություններն ուղարկում է համապատասխան նախարարություններ:

VII. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

44. Խորհրդի աշխատակարգի մեջ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունները՝ համապատասխան հիմնավորումներով, խորհրդի որոշմամբ ներկայացվում են Հայաստանի Հանրապետության վարչապետին:

VIII. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

45. Խորհրդի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Վ. Գաբրիելյան

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2013 թ.
հոկտեմբերի 7-ի N 897-Ա
որոշման

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ» N 5222-ԱՍ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՂ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔԱՂՑԿԵՂԻ ԲՈՒԺՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ» ԲԱՂԱԴՐԻՉԸ) ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

- Դ. Դումանյան - ՀՀ առողջապահության նախարար (խորհրդի նախագահ)
- Պ. Սաֆարյան - ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ
- Կ. Մինասյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
- Ա. Բաբլոյան - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

- Ա. Բախշյան - ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ
- Ջ. Բաղդասարյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
- Ա. Սարգսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար - նախարարի տեղակալ
- Ն. Արզունյան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության դատական ակտերի հարկադիր կատարման և քրեակատարողական համակարգի օրենսդրական ապահովման բաժնի պետ
- Ծ. Վարդանյան - ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության քաղաքականության վարչության պետի պաշտոնակատար
- Կ. Անտոնյան - ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի պաշտոնակատար
- Ն. Զուլոյան - ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրենի պաշտոնակատար (խորհրդի քարտուղար)

(հավելվածը փոփ. 14.03.14 N 188-Ս)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Վ. Գաբրիելյան

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2013 թ.
հոկտեմբերի 7-ի N 897-Ս
 որոշման

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔԱՂՑԿԵՂԻ ԲՈՒԺՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ» ԲԱՂԱԴՐԻՉԸ ԿԱՌԱՎԱՐՈՂ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

- Դ. Դումանյան - ՀՀ առողջապահության նախարար (խորհրդի նախագահ)
- Պ. Սաֆարյան - ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ
- Կ. Մինասյան - ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
- Վ. Պողոսյան - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

- Ծ. Վարդանյան - ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության քաղաքականության վարչության պետի պաշտոնակատար
- Շ. Գալստյան - ՀՀ առողջապահության նախարարության «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)
- Ա. Խաչատրյան - Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի գործադիր տնօրեն (համաձայնությամբ)
- Ա. Ավետիսյան - «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի իգոտոպների հետազոտության և արտադրության բաժնի վարիչ (համաձայնությամբ)
- Ն. Զուլոյան - ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրենի պաշտոնակատար (խորհրդի քարտուղար)

(հավելվածը փոփ. 14.03.14 N 188-Ս)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Վ. Գաբրիելյան